ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2025-30թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 2025թ.-ի իրականացման արդյունքները

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2025-30թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը իր 6 նպատակների իրականացման համար պլանավորել է լուծել 28 խնդիր, որոնց համար պետք է իրականացնել 82 գործողություն արտահայտված 99 արդյունքի ցուցիչներով:

Ըստ 2025-30թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցի 2025թ.-ին մասնաճյուղը ծրագրի 6 նպատակների իրականացման շրջանակներում պլանավորված խնդիրների համար պետք է իրականացներ 38 գործողություն, որոնց իրականացման արդյունքները արտահայտված էին 41 ցուցիչներով:

2025թ.-ի ընթացքում մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների գործունեությունը ներկայացնելու համար 2 անգամ իրականացվել է մոնիթորիգ:

Նախապես ստորաբաժանումների համար ստեղծվել է գործունեության արդյունքների ներկայացման արտաքին հարթակ (գուգլ դիսկի վրա), որտեղ յուրաքանչյուր բաժին իր հասանելիության տիրույթում ըստ գործողությունների իրականացման վիճակի լրացրել է մոնիթորինգի ֆայլը: Յուրաքանչյուր գործողության համար (ըստ ցուցիչների) ստորաբաժանումների պատասխանատուները նախ հայտարարել են գործընթացի վիճակի մասին համապատասխան նշումով, մասնավորապես նշելով. կատարված է ամբողջությամբ, ընթացքի մեջ է, կատարված է մասնակի, սկսվել է բայց կասեցվել է, չի իրականացվել, ապա ներկայացրել են կարճ հաշվետվություն, ձեռք բերված արդյունքների մասին, նաև հիմնավորել են գործընթացների մասնակիորեն կատարելու կամ չկատարելու պատճառները (այստեղ փաստենք, որ ոչ միշտ են լրացվել):

Այժմ մանրամասն ներկայացնենք ռազմավարական ծրագրի 2025թ.-ի կատարողականը նախ թվերով, ապա ձեռք բերված արդյունքներով, առաջացած խնդիրներով և այլն:

Ըստ ստորաբաժանումների 2025թ.-ի մոնիթորինգի արդյունքների կատարողականն ունի հետևյալ պատկերը (այսինքն, լրացվել է ըստ ՌԾ-ի 2025թ.-ի մոնիթորինգի ֆայլում լրացված արդյունքների).

Կատարումը (քանակ/%)	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ՈՒՄՎ	ԿԲՈԱԲ	ԱԿԻԱԲ	ՏՀՍԶԲ	ՏԳԿՍԲ	ԳՔ	Ընդ. (%)	
Կատարված է ամբողջությամբ (Կ)	8	1	5	2	1	6	1	1	2	4	7	18.4
	40%	5.0%	25%	10%	7.1%	40%	10%	7.1%	15.4%	66.7%		
Ընթացքի մեջ է (Ը)	9	4	5	11	1	5		13	8	0	23	60.5
	45%	20%	25%	55%	7.1%	33.3%		92.9%	61.5%			
Կատարված է մասնակի (Մ)	1	2	9		1	1				2	2	5.3
	5%	10%	45%		7.1%	6.7%				33.3%		
Չի կատարվել (Չ)	1		1	5	1	2			2		4	10.5
	5%		5%	25%	7.1%	13.3%			15.4%			
Մեկնարկել է, բայց կասեցվել է (Ց)									1			0
									7.7%			
Չեն պատասխանել (Պ)	1	13		2	10	1	9				2	5.3
	5%	65%		10%	71.4%	6.7%	90%					
Ընդամենը գործ.	**20**	**20**	**20**	**20**	**14**	**15**	**10**	**14**	**13**	**6**	**38**	

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ 2025թ.-ի համար պլանավորված 38 գործողություններից ամբողջությամբ իրականացվել է 7-ը (18.4%), ընթացքի մեջ են 23-ը (60.5%), կատարված է մասնակիորեն՝ 2-ը, իսկ 6 գործողությունների համար համապատասխան գործընթացներ չեն իրականացվել:





Այստեղ պետք է նշել, թե ինչու՞ են ընթացքի մեջ գտնվող գործընթացները շատ, որովհետև ըստ ռազմավարական ծրագրի պլան ժամանակացույցի այդ գործընթացները շարունակական են և կարող են իրականացվել նաև հաջորդ ժամանակահատվածներում:

Իսկ ահա միայն 2025թ.-ին իրականացվելու և ավարտին հասցնելու համար պլանավորված 7 գործընթացներից **ամբողջությամբ իրականացվել է 2-ը**, ընթացքի մեջ են 4-ը, իսկ 1-ը՝ չի իրականացվել: Դրանց կանդրադառնանք համապատասխան խնդիրները դիտարկելուց:

Պլանավորված է միայն 25 թվի համար	7	%
Կատարված է ամբողջությամբ	2	**28.6%**
Ընթացքի մեջ է	4	**57.1%**
Կատարված է մասնակի		
Չի կատարվել	1	**14.3%**

Այժմ ներկայացնենք կատարողականն ըստ նպատակների և ձեռք բերված արդյունքների:

	ՆՊԱՏԱԿ 1		ՆՊԱՏԱԿ 2		ՆՊԱՏԱԿ 3		ՆՊԱՏԱԿ 4		ՆՊԱՏԱԿ 5		ՆՊԱՏԱԿ 6		Ընդամենը	
Գործ./ պետք է իրակ.(2025թ.)	3	%	5	%	14	%	3	%	4	%	9	%	38	%
Իրականացվել է	2	66.7%			2	14.3%			1	25.0%	2	22.2%	7	18.4%
Ընթացքի մեջ է	1	33.3%	4	80.0%	9	64.3%	2	66.7%	1	25.0%	6	66.7%	23	60.5%
Իրականացվել է մասնակի			1	20.0%							1	11.1%	2	5.3%
Չի իրականացվել		0.0%			3	21.4%	1	33.3%	2	50.0%			6	15.8%
Իրականացվել է կամ ընթացքի մեջ է (%)	3	100.0%	4	80.0%	11	78.6%	2	66.7%	2	50.0%	8	88.9%	30	78.9%



Այս արդյունքները ցույց են տալիս, որ ռազմավարական պլանով 2025թ.-ի համար նախատեսված գործողությունների իրականացման հետ կապված ամենաշատ խնդիրներ առաջացել են 3-րդ և 5-րդ նպատակներում, որոնք վերաբերում են միջավայրի և ենթակառուցվածքների համապատասխանեցմանը մասնաճյուղի բոլոր խմբերի պահանջներին և կառավարման համակարգի արդիականացմանը (*արդյունքները հիմնված են ստորաբաժանումների իրականացրած մոնիթորինգի և ՌԾ կատարողականի վերաբերյալ կազմած հաշվետվությունների վրա*)։ Սրանց նույնպես կանդրադառնանք համապատասխան խնդիրները դիտարկելուց։

ՆՊԱՏԱԿ 1։ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ։

Նպատակ 1-ը 2025թ.-ի համար ներառում է միայն 2 խնդիր (ընդհանուր 5-ից) 3 գործողություններով, որոնցից 2-ը (խնդիր 1) կատարված է ամբողջությամբ (իրականացվել է), իսկ 1-ը՝ ընթացքի մեջ է (խնդիր 2)։



	ՆՊԱՏԱԿ 1						
Խնդիր/գործ.	Խ1	Խ2	Խ3	Խ4	Խ5	Ընդ.	%
Գործ./Ցուցիչներ (2025-30)	4/4	9/9	4/4	1/1	2/2	**20/20**	
2025 (ըստ ցուցիչների)	**2**	**1**				**3**	
Իրականացվել է	2					2	66.7%
Ընթացքի մեջ է		1				1	33.3%
Իրականացվել է մասնակի							
Չի իրականացվել							

Խնդիր 1.Դիմորդների շրջանում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպում և բարձր ներուժ ունեցող/տաղանդավոր դիմորդների ներգրավում:

Այս խնդրի 4 գործողություններից 2025թ.-ի համար ներառված է եղել միայն 2-ը, որոնք, ըստ տվյալ գործընթացներն իրականացնող ստորաբաժանումների (ՈՒՄՎ, ֆակուլտետներ) հաշվետվությունների իրականացվել են ամբողջությամբ:

Գործողություն	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ՈՒՄՎ	ԵՊՀ ԻՄ
1.1.1 Դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը միտված մասնագիտական փաթեթի ստեղծում:	Կ	Ը	Կ	Կ	Ը	Կ
1.1.2 Մասնաճյուղը և գործող կրթական ծառայությունները/ծրագրերը ներկայացնող պարբերական միջոցառումների կազմակերպում:	Ը	Ը	Կ	Ը	Կ	Կ

Հիմնական ձեռքբերումը. 2024-25 ուստարվա ընթացքում Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր Աղուզումցյանը «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների հետ համատեղ պատրաստել են «Մասնագիտական կողմնորոշման ուղեցույց», որտեղ ներառված են մասնագիտական կողմնորոշման հիմնական մոտեցումները, համապատասխան թեստերը և հետազոտություն իրականացնելու մեթոդական նյութերը: Ուղեցույցը երաշխավորվել է տպագրության:

Իսկ ֆակուլտետները ՊԿՇՀ բաժնի հետ միասին ուղղակի իրականացրել են մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ միջնակարգ, հանրակրթական, ավագ դպրոցներում և քոլեջներում, պատրաստել են ֆակուլտետների վերաբերյալ տեղեկատվական նյութեր և դրանք տրամադրել դպրոցներին:

Հաշվետու ժամանակահատվածում.

1) Տավուշի մարզի 12 հանրակրթական դպրոցների 11-րդ և 12-րդ դասարանի աշակերտների հետ կազմակերպվել են **հանդիպում-քննարկումներ,**
2) Մասնագիտական ամբիոնների հետ համագործակցությամբ Իջևանի, Դիլիջանի և Բերդի **12 դպրոցներում** կազմակերպվել են **31 դասախոսություններ** «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Անգլերեն», «Հայոց պատմություն», «Արվեստ» և «Ռուսաց լեզու» առարկաների շրջանակներում՝ ծրագրային և արդիական, դպրոցականների համար հետաքրքրություն ու մոտիվացիա առաջացնող մի շարք թեմաների վերաբերյալ:
3) մարզի հանրակրթական դպրոցների և քոլեջների հետ համագործակցությամբ կազմակերպել է **19 ճանաչողական այցեր** 6-12-րդ դասարանների և Իջևանի Պ.Տէվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջի **328 աշակերտի մասնակցությամբ**:
4) «ԵՊՀ օլիմպիադա-2025»-ի շրջանակներում Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններից օլիմպիադային մասնակցել են 25 դպրոցների 12-րդ դասարանի **177 աշակերտ**, որոնցից 2-րդ փուլ է անցել **9 առարկայից 45 աշակերտ** (մասնակիցների՝ գրեթե 25%-ը):
5) ՊԿՇՀ բաժնի և Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ հանրակրթական 4 դպրոցներում (Այգեհովիտի և Ազատամուտի, Սևքարի և Հաղարծնի) կազմակերպել է **«Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը**, որին մասնակցել են 10-11-րդ դասարանների **48 աշակերտներ:**

Նշենք, որ մասնագիտական կողմնորոշման այս աշխատանքները տալիս են իրենց արդյունքները, մասնավորապես մասնաճյուղի գրեթե բոլոր կրթական ծրագրերի համար դիմորդների թիվը գերազանցել է

հատկացված տեղերի քանակին, որոշ կրթական ծրագրերի համար էլ գրանցվել են ընդունելության բարձր ցուցանիշներ (ԱԼԳ, Ֆինանսներ)։ Նմանատիպ արդյունքներ են գրանցվել նաև մագիստրոսական կրթական ծրագրերի համար։

Նշենք, որ ֆակուլտետներում մասնագիտական կողմնորոշման բոլոր միջոցառումների կազմակերպիչը ՊԿՇՀ բաժինն է։ Կարևոր է, որ այդ գործընթացում ֆակուլտետներն ակտիվ աջակցում են բաժնին։ Ցանկալի կլինի, որ ֆակուլտետներն իրենք նույնպես իրականացնեն համապատասխան գործընթացներ՝ ի համալրումն կազմակերպվողներին, նախաձեռնեն կրթական ծրագրերը ներկայացնող նեղ մասնագիտական, մոտիվացիոն, գովազդող միջոցառումներ, պատրաստեն տեղեկատվական նյութեր, տեսասահիկներ, կարճ ֆիլմեր և այլն։

Վերլուծելով մասնագիտական կողմնորոշման աշխատանքների և մասնաճյուղի ընդունելության ցուցանիշները ՈՒՄՎ-ն և ֆակուլտետներն այդ գործընթացների բարելավման և դիմորդների հոսքի ավելացման համար առաջարկում են.

1. հաճախակի դարձնել հանրակրթական դպրոցներում կազմակերպվող դասախոսությունները, արվեստանոցներում վարպետաց դասերը,
2. հաճախակի դարձնել ճանաչողական այցերը և ապահովել մասնակիցների ավելի մեծ շրջանակ,
3. ավագ դպրոցների, վարժարանների և միջնակարգ դպրոցների աշակերտների համար կազմակերպել «բաց դռների» օրեր,
4. իրականացնել դիմորդների գիտելիքների ստուգում և գնահատում,
5. գովազդել ֆակուլտետների ավագույն շրջանավարտների գրանցած հաջողությունները,
6. օգտվելով «Մասնագիտական կողմնորոշման ուղեցույցից»՝ իրականացնել մասնագիտական կողմնորոշման հետազոտություններ։
7. **աշակերտների հետ տանել ոչ միայն զուտ մասնագիտական կողմնորոշման, այլ նաև հոգեբանական կողմնորոշման աշխատանքներ։**

Խնդիր 1.2 Կրթական ծրագրերի բովանդակության և կրթական գործընթացի կազմակերպման սկզբունքների արդիականացում։

Այս խնդրի 9 գործողություններից 2025թ.-ի համար ներառված է եղել միայն 1-ը, որի իրականացումն ըստ տվյալ գործընթացն իրականացնող ստորաբաժանումների (ֆակուլտետներ, ԿԲՈԱԲ) հաշվետվությունների ընթացքի մեջ է։

Գործողություն	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ՈՒՄՎ	ԿԲՈԱԲ	ԵՊՀ ԻՄ
1.2.9 Ուսանողների ինքնուրույն աշխատանքի ժամերի/բեռնվածության արդյունավետ օգտագործման և արդյունքների հաշվառման/չափման մեխանիզմների մշակում և ներդրում։	Ը	Ը	Մ	Ը	Չ/Ի	Ը	Ը

Գործընթացը վերաբերում է ուսանողի ինքնուրույն/արտալսարանային աշխատանքի գնահատման չափանիշների լրակազմի մշակմանը։

Այս գործընթացի շրջանակներում ֆակուլտետները ներկայացրել են հաշվետվություն միայն ինքնուրույն աշխատանքների կազմակերպման և իրականացման վերաբերյալ, իսկ ինքնուրույն աշխատանքներով ուսանողի բեռնվածության հաշվարկի վերաբերյալ որոշակի առաջարկ կատարվել է ԲԳՖ-ի կողմից, մյուսների կողմից առաջարկներ չեն եղել։

Այս ուղղությամբ որոշակի աշխատանք կատարել է ԿԲՈԱ բաժինը: Բաժնի կողմից մշակվել է ինքնուրույն աշխատանքի իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության ուսումնասիրության հարցման հարցաշար, որը գտնվում է քննարկման փուլում:

Ներկայացվել է մեկ դասընթացի շրջանակներում ինքնուրույն աշխատանքի համար ուսանողի բեռնվածության բաղադրիչների ցանկ և հաշվարկի նորմեր, որը ֆոկուս խմբով քննարկվել և տրվել է ուսանողներին մեկ դասընթացի շրջանակներում այն լրացնելու համար՝ նշելով ինքնուրույն խատանքների իրականացման համար իրենց ծախսած ժամանակն ըստ շաբաթների: Արդյունքների հավաքագրումը նպատակ ունի պարզելու, թե առաջարկվող համակարգը որքանով է հարմար և արդյունավետ, և որքանով է այն ներկայացնում ուսանողի իրական բեռնվածությունը: Գործընթացը ընթացքի մեջ է:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2: ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:

Նպատակ 2-ը 2025թ.-ի համար ներառում է միայն 3 խնդիր (ընդհանուր 4-ից) 5 գործողություններով, որոնցից 4-ը՝ ընթացքի մեջ է (խնդիր 1,4), իսկ 1-ն իրականացվել է մասնակի (խնդիր 2):

Ն Պ Ա Տ Ա Կ 2						
Խնդիր/գործ.	Խ1	Խ2	Խ3	Խ4	Ընդ.	%
Գործ./Ցուցիչներ (2025-30)	2/2	2/5	4/6	3/5	**11/18**	
2025 թ.	**1**	**1**		**3**	**5**	
Իրականացվել է						
Ընթացքի մեջ է	**1**			**3**	**4**	**80.0%**
Իրականացվել է մասնակի		**1**			**1**	**20.0%**
Չի իրականացվել						

Գիտական արդյունքների բարելավման համար իրականացվող գործընթացների հաջողությունները պայմանավորված են եղել «Գիտաչափական հոդվածների հրապարակման աշխուժացում» և գիտատեղեկատվական շտեմարանների վերաբերյալ կազմակերպված վերապատրաստումների շարքով: Նաև խթան է հանդիսացել ԵՊՀ ԻՄ-ում գործող գիտական հոդվածների համար լրավճարների տրամադրման գործող կարգը:

<u>Որպես խնդիրներ պետք է նշել</u> գիտահետազոտական նախագծերում դասախոսների և ուսանողների ներգրավվածության ցածր ցուցանիշը (համապատասխանաբար 4.8% և 0.27%), ներքին դրամաշնորհային մրցույթներին մասնակցության թվի նվազումը (5-ից իջել է 2), որի համար միգուցե պատճառ է հանդիսացել հատկացվող դրամական միջոցների անբավարարությունը:

Ըստ գիտական քարտուղարի ներկայացրած հաշվետվության նախատեսվում է վերանայել ներքին դրամաշնորհների ֆինանսավորման ծավալները:

Այժմ ներկայացնենք գիտական գործունեության վիճակն ըստ 2025թ.-ի գործողությունների պլանով նախատեսված խնդիրներ/գործողությունների:

Խնդիր 2.1 Գիտական գործունեության համակարգման հնարավորությունների բարելավում կառուցվածքային, ընթացակարգային և գործիքակազմի բարեփոխման միջոցով:

Այս խնդրի 2 գործընթացներից 2025թ.-ի իրականացման համար ներառվել է 1-ը, որն ըստ պատասխանատու ստորաբաժանումների իրականացման ընթացքի մեջ է։

Գործողություն	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ԿԲՈԱԲ	ԵՊՀ ԻՄ
2.1.1 Գիտական գործունեության համակարգման ընթացիկ գործընթացներում բացերը հայտնաբերելու նպատակով իրականացվող ներքին ուսումնասիրություն/գնահատում։	Ը	Կ	Ը	Չ/Ի	Կ	Ը

Այդ գործընթացը պահանջում էր մասնաճյուղում գիտական գործունեության համակարգման ընթացիկ գործընթացներում բացերը հայտնաբերելու նպատակով իրականացնել ներքին ուսումնասիրություն/գնահատում։

Այս գործընթացի իրականացման պատասխանատուներն են **<u>ֆակուլտետները և ԿԲՈԱ բաժինը</u>**։ <u>Ֆակուլտետները</u> նշել են, որ պարբերաբար ուղղակի գրանցում են դասախոսական կազմի գիտական գործունեության արդյունքները, այլ հետազոտություններ չեն կատարել։ ԲԳՖ-ից նշել են, որ ամբիոններում առկա է դասախոսական կազմի գիտական գործունեության տվյալների բազա։ Ուսումնասիրվել և վերլուծվել են դասախոսների հաշվետվությունները գիտական գործունեության վերաբերյալ։ Վեր են հանվել առկա խնդիրները (ԾԻՏ ամբ. 03.06.25նիստի թիվ 13 արձ.,)։

<u>ԿԲՈԱ բաժինը</u> գիտական գործունեության համակարգման, բարելավման և ընթացիկ գործընթացներում բացերը հայտնաբերելու համար.

- իրականացրել է բենչմարքինգ հրապարակային բաց գիտության քաղաքականություն ունեցող ՀՀ բուհերում՝ ԵՊՀ, AUA, Բրյուսով, մշակել է մասնաճյուղի բաց գիտության քաղաքականությունը, որը գտնվում է հաստատման փուլում,
- մշակել է առաջարկությունների փաթեթ,
- մշակել է հարցման հարցաշար, հարցումն անց է կացվելու 2026թ.-ի ապրիլին։

Խնդիր 2.2 ԵՊՀ ԻՄ գիտական գործառույթի և այլ գործառույթների միջև կապի ամրապնդում՝ ներքին պատվերների և համագործակցային հնարավորությունների խթանման միջոցով։

Այս խնդրի 5 գործընթացներից (ըստ ցուցիչների) 2025թ.-ի իրականացման համար ներառվել է 1-ը, որն ըստ պատասխանատու ստորաբաժանումների իրականացվել է **մասնակի**։

Գործողություն	ԱԿԻԱԲ	ԳՔ	ԵՊՀ ԻՄ
2.2.1 Հանձնաժողովի ստեղծում՝ գիտական հետազոտությունների և Մասնաճյուղի այլ գործառույթների միջև հաղորդակցությունը ապահովելու նպատակով։	Կ	Մ	Մ

Այդ գործընթացի շրջանակներում մասնաճյուղում գիտական հետազոտությունների և Մասնաճյուղի այլ գործառույթների միջև հաղորդակցությունն ապահովելու նպատակով պետք էր ստեղծել հանձնաժողով։ Այս գործընթացի իրականցման պատասխանատուներն էին գիտական քարտուղարը և ԱԿԻԱ բաժինը։

Նշենք, որ ԵՊՀ տնօրենի N 60 պ. 3, 05.04.2025թ. հրամանով հանձնաժողովը կազմվել է, սակայն դեռ չի գործում։

Խնդիր 2.4 ԵՊՀ ԻՄ գիտահետազոտական արդյունքի հաղորդակցում միջազգային գիտական համայնքի հետ։

Այս խնդրի 3 գործընթացներից 2025թ.-ի իրականացման համար ներառվել է 3-ը, որոնք ըստ պատասխանատու ստորաբաժանումների՝ ընթացքի մեջ են, այս գործընթացները պլանավորված են ընդհանրապես 2025-2030թթ. համար, հետևաբար դրանց ընթացքի մեջ լինելը սպասելի արդյունք է:

Գործողություն	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ԿԲՈԱԲ	ԱԿԻԱԲ	ՏՀՍԶԲ	ԳՔ	ԵՊՀ ԻՄ
2.4.1 ԵՊՀ ԻՄ հետազոտությունների տեսանելիության բարձրացում՝ հոդվածներ հրապարակելով միջազգային ամսագրերում և մասնակցելով միջազգային գիտաժողովներին:	Ը	Մ	Ը	Ը	Մ	Չ/Պ	Ը	Կ	Ը
2.4.2 Համագործակցությունների հաստատում միջազգային գիտական հաստատությունների հետ՝ համատեղ ծրագրեր և հրապարակումներ կատարելու նպատակով:	Ը	Չ/Պ	Մ	Ը		Չ/Պ		Կ	Ը
2.4.3 ԵՊՀ ԻՄ առցանց հարթակների արդիականացում, որտեղ կհրապարակվեն մասնաճյուղի հետազոտական արդյունքները՝ դրանք հասանելի դարձնելով միջազգային գիտական հանրությանը:	Ը	Չ/Պ	Չ/Ի	Չ/Ի			Ը	Կ	Ը

Ներառված գործընթացների շրջանակներում պետք էր թարմացնել գիտահետազոտական աշխատանքների համար խրախուսման մեխանիզմները, ավելացնել միջազգային ամսագրերում տարեկան հրատարակությունների թիվը (առնվազն՝ 4 տարեկան), ապահովել կամ աջակցել աշխատակիցների միջազգային գիտաժողովներին մասնակցությանը (տարեկան 4-ը), իրականացնել միջազգային գիտական հաստատությունների հետ գիտական ծրագրեր (առնվազն 1 նոր ծրագիր), արդիականացնել ԵՊՀ ԻՄ առցանց հարթակները՝ հեազոտությունների արդյունքների հասանելիության ապահովման համար:

Այս խնդրի շրջանակներում ձեռք են բերվել հետևյալ արդյունքները.

1) 2025թ. ընթացքում արձանագրվել է որակական առաջընթաց գիտական հրատարակությունների ոլորտում: ԵՊՀ ԻՄ-ի հիմնական դասախոսական կազմի (թվով 64 դասախոս) կողմից հրապարակվել է **28 գիտական աշխատանք, դրանցից մեկը՝ Scopus (Q2)** շտեմարանում, 12-ը՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված հանդեսներում, 3 զեկույց միջազգային գիտաժողովների ժողովածուներում, 12 աշխատանքներ ուսանողների հետ՝ միջազգային կոնֆերանսների ժողովածուներում:
2) Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2 դասախոսներ ստացել են գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 3-ը՝ դոցենտի գիտական կոչում, մեկ դասախոս ԵՊՀ-ում ձևակերպվել է որպես հայցորդ:
3) Էապես ընդլայնվել է միջազգային համագործակցության աշխարհագրությունը՝ կնքվել են 4 նոր հուշագրեր և համաձայնագրեր Ղազախստանի, Բուլղարիայի, Ռուսաստանի առաջատար բուհերի և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի հետ:
4) ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը Հայաստանի, Ղրղզստանի, Սլովենիայի, Գերմանիայի և Վրաստանի մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցությամբ ERASMUS Lump Sum Grant («Էրազմուս Լամփ Սամ Գրանտ») ծրագրի շրջանակներում դարձել է **DIGITECH** («Դիջիթեք») ծրագրի մասնակից, որի գլխավոր նպատակն է բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացումը, նորարարական տեխնոլոգիաների ներդրումը տեխնոլոգիական գործընթացների և արտադրության թվայնացման մեջ: DIGITECH ծրագրի տևողությունը 3 տարի է, ԵՊՀ ԻՄ-ի համար նախատեսված գումարը 84.945 եվրո է:

5) ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրի շրջանակներում 2 դասախոս մասնակցել են եվրոպական երկրներում կազմակերպված 4 կոնֆերանսների, երկու դասախոս գործուղվել են Սլովակիայի Բրատիսլավա և Պրեշով քաղաքների համալսարաններ՝ դասախոսություն կարդալու նպատակով,
6) Երկու դասախոս մասնակցել են Բուլղարիայում կայացած Սուրբ Կիրիլ և Մեֆոդիի անվան Միջազգային գրողների միության կողմից կազմակերպված «Славянский завет» միջազգային գրական փառատոնին (մեկը՝ որպես մրցութային նախագծերի հեղինակ և դիպլոմակիր, մյուսը՝ որպես խոսնակ),
7) Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ Ա.Հովակիմյանը մասնակցել է COMDATA 2025 միջազգային (2025թ. ապրիլ) և CICSAM 2025 (մարտ, ք. Երևան) կոնֆերանսներին:
8) ԿԲՈԱ բաժնի կողմից մասնաճյուղի դասախոսների համար իրականացվել են «Գիտաչափական հոդվածների հրապարակման աշխուժացում» և «Առաջատար գիտատեղեկատվական շտեմարաններ և դրանցում ընդգրկված ամսագրերում տպագրվելու ընթացքը և պահանջները» թեմաներով վերապատրաստման դասընթացներ:
9) Գործարկվել է մասնաճյուղի նոր և ավելի տեղեկատվական կայքէջը, որի «Բաց գիտություն» բաժնում տեղադրվում է միջազգային ամսագրերում ԵՊՀ ԻՄ դասախոսների հրապարակումների մասին տեղեկատվություն՝ գիտքարտուղարի ներկայացմամբ:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3: ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵ-ՑՈՒՄ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒ ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ:

Նպատակ 3-ը 2025թ.-ի համար 7 խնդիրներից ներառում է 7-ը՝ 14 գործողություններով, որոնցից 2-ը իրականացվել է (Խնդիրներ 3,7), 9-ը՝ ընթացքի մեջ է, իսկ 3-ը՝ չի իրականացվել (Խնդիրներ 3,6):

ՆՊԱՏԱԿ 3									
Խնդիր/գործ.	3	4	4	3	2	3	3	22	
2025թ.	Խ1	Խ2	Խ3	Խ4	Խ5	Խ6	Խ7	Ընդ.	
	1	**3**	**3**	**1**	**2**	**2**	**2**	**14**	
Իրականացվել է			1				1	**2**	**14.3%**
Ընթացքի մեջ է	1	3	1	1	2		1	**9**	**64.3%**
Իրականացվել է մասնակի									
Չի իրականացվել			1			2		**3**	**21.4%**

Այս նպատակի 7 խնդիրների իրականացման պատասխանատուն հիմնականում ՏԳԿՍ բաժինն է: Ըստ մոնիթորինգի արդյունքների և բաժնի ներկայացրած հաշվետվության բոլոր գործընթացները հիմնականում **ընթացքի մեջ են:**

	Գործողություն	ՏՀՍԶԲ	ՏԳԿՍԲ	ԵՊՀ ԻՄ
1	**3.1**.1 Էլեկտրական ենթակառուցվածքների ծանրաբեռնվածության հաշվարկում և ընդհանուր ծանրաբեռնվածության տեղեկատուի մշակում:	Ը	Ը	Ը

2	**3.2**.1 Ուսումնական լաբորատորիաների վերանորոգման, կահավորման և սարքավորումներով հագեցման պլան-ժամանակացույցի մշակում և դրա հիման վրա աշխատանքների պլանավորում և իրականացում:		Ը	Ը
3	**3.2**.2 Լսարանների վերանորոգման, կահավորման և սարքավորումներով հագեցման պլան-ժամանակացույցի մշակում և դրա հիման վրա աշխատանքների պլանավորում և իրականացում:		Ը	Ը
4	**3.2.**4 Պլան-ժամանակացույցների տարեկան վերանայում և ադապտացում Մասնաճյուղում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխություններին և կարիքներին:		Ը	Ը
5	**3.3**.1 Մասնաշենքերի միջանցքների, ընդհանուր օգտագործման տարածքների և կամպուսային տարածքի վերանորոգման և կահավորման հայեցակարգի և պլան-ժամանակացույցի մշակում և դրանց հիման վրա աշխատանքների պլանավորում և իրականացում:			Ը
6	**3.3.**2 ԵՊՀ ԻՄ սպորտդահլիճի բարեկարգում և արդիականացում:		Կ	Կ
7	**3.3**.3 Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար նախատեսված աշխատանքային տարածքներն աշխատակիցների պահանջներին համապատասխանեցման հայեցակարգի մշակում, պիլոտային ծրագրի պլան-ժամանակացույցի մշակում և աշխատանքների կազմակերպում:		Չ/Ի	Չ
8	**3.4.**2 Մասնաճյուղի տարածքում թվային և ֆիզիկական տեղեկատվական վահանակների արդիականացում		Ը	Ը
9	**3.6.**2 Ներառականության և ԿԶՆ ստանդարտների ապահովման նպատակով ԵՊՀ ԻՄ լրամշակված և արդիականացված ընթացակարգերի ներդնում	Չ/Պ		Չ
10	**3.6**.3 «Կանաչ համալսարան»-ի հայեցակարգի ներդնում և պիլոտային ծրագրերի իրականացում:		Չ/Ի	Չ
11	**3.7**.1 Տեսաձայնագրման համակարգերի արդիականացում:	Ը	Ը	Ը
12	**3.7**.2 Հակահրդեհային համակարգերի տեղադրում:	Կ	Կ	Կ

	Գործողություն	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ՌԻՄՎ	ՏԳԿՍԲ	ԵՊՀ ԻՄ
13	**3.5**.1. Ուսումնական լսարանների և լաբորատորիաների բաշխման և օգտագործման սկզբունքի վերանայում՝ հաշվի առնելով մասնակի բեռնվածությամբ ճկուն անհատական ծրագրերի իրականացման իրողությունը:	Կ	Չ/Պ	Կ	Ը	Մ	Ը	Ը
14	**3.5**.2.Ուսումնական տարածքների հարմարեցում ուսանողի կրթական կարիքներին՝ ԿԾ իրականացման արդյունավետությունն ապահովելու նպատակով՝ ԿԾ իրականացման պատասխանատու-ների կողմից համապատասխան չափանիշների ներկայացման հիման վրա:	Կ	Չ/Պ	Կ	Կ	Չ/Պ	Ը	Ը

Այդ 7 խնդիրների շրջանակներում **<u>իրականացվել են.</u>**

1) անվտանգության ինժեների կողմից կատարվել են էլեկտրական ենթակառուցվածքների ծանրաբեռնվածության համապատասխան հաշվարկներ՝ հետագա օպտիմալ վերաբաշխում իրականացնելու համար,
2) վերանորոգվել է 3 լսարան՝ թիվ 38, 39,58 և կահավորվել է 4 լսարան,
3) վերանորոգվել, բարեկարգվել և արդիականացվել է սպորտդահլիճը,
4) վերանորոգվել են վարչական մասնաշենքի միջանցքները,

5) հիմնանորոգվել է վարչական մասնաշենքի բակը, կատարվել են հողային աշխատանքներ,
6) ամբողջությամբ փոխարինվել են գրադարանի 2 լուսամուտը և դուռը,
7) գրադարանի ճակատայի մասում ամրացված ԵՊՀ ԻՄ գովազդային համակարգը փոխվել է,
8) հմնանորոգվել է մասնաճյուղի 2-րդ մասնաշենքի տանիքը,
9) նախաձեռնվել են անհրաժեշտ գործընթացներ 2-րդ մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքները սկսելու համար,
10) ուսանողական 3 հասցեում տեղադրվել է տեսաձայնագրման համակարգ,
11) բոլոր լսարաններում, ուսումնական լաբորատորիաներում և միջանցքներում տեղադրված են հակահրդեհային համակարգեր,
12) հայտարարվել է գույքի ձեռքբերման մրցույթ:

Այս ուղղությամբ գործընթացները շարունակվում են և ըստ պլանավորման նրանք շարունակական են:

Նշենք, որ

1) էլեկտրական ենթակառուցվածքների ընդհանուր ծանրաբեռնվածության **տեղեկատու չի մշակվել**, չնայած, որ այս գործընթացն ամբողջությամբ պետք է ավարտվեր 2025թ.-ին,
2) քանի որ ուսումնական ստորաբաժանումների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի համար աշխատանքային տարածքներ նախատեսելու վերաբերյալ առաջարկներ չեն եղել, այդ գործընթացը **չի մեկնարկել** (ըստ ՏԳԿՍ բաժնի մոնիթորինգի արդյունքների),
3) **չի մշակվել** «Կանաչ համալսարան»-ի հայեցակարգ և չեն իրականացվել համապատասխան պիլոտային ծրագրեր,

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 4: ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱԼՐՈՒՄ:

Նպատակ 4-ը 2025թ.-ի համար ներառում է միայն 2 խնդիր (ընդհանուր 4-ից) 3 գործողություններով, որոնցից 2-ը՝ ընթացքի մեջ է (խնդիր 4), իսկ 1-ը չի իրականացվել (խնդիր 2):

Ն Պ Ա Տ Ա Կ 4						
Խնդիր/գործ.	Խ1	Խ2	Խ3	Խ4	Ընդ.	%
2025 թ.		**1**		**2**	**3**	
Իրականացվել է						
Ընթացքի մեջ է				**2**	**2**	**66.7%**
Իրականացվել է մասնակի						
Չի իրականացվել		1			**1**	**33.3%**

Այս նպատակի իրականացման շրջանակներում պետք էր 1 վարչական և 1 ուսումնական ստորաբաժանումում փորձարկել աշխատակազմի գործունեության և կարիքների ինքնագնահատման համակարգը , մասնավոր ոլորտի գործընկերների համար մշակել գոնե մեկ կորպորատիվ փաթեթ, մշակել և իրականացնել ուսանողների համար լրացուցիչ կրթական ծրագրեր:

Գործողություններ	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ՈՒՄՎ	ԿԲՈԱԲ	ԱԿԻԱԲ	ԵՊՀ ԻՄ
4.2.1 Աշխատակազմի գործունեության և կարիքնե-րի ինքնագնահատման և գնահատման համակարգի փորձարկում						Չ/Ի	Չ/Պ	Չ/Ի
4.4.1 Մասնավոր ոլորտի գործընկերների համար կորպորատիվ փաթեթների մշակում և առևտրայնացում:	Ը	Չ/Պ	Մ	Ը	Չ/Պ	Ը	Չ/Պ	Ը
4.4.2 Ուսանողների համար կարիքների գնահատ-ման հիման վրա ձևակերպված և լրամշակված լրացուցիչ կրթության ծրագրերի մշակում և իրականացում:	Ը	Չ/Պ	Մ	Ը	Չ/Պ		Չ/Պ	Ը

Ըստ ԿԲՈԱ բաժնի հաշվետվության գործողություն **4.2.1-ը չի իրականացվել**, որովհետև նրա իրականացումը կախված է ԵՊՀ ոչ ամբողջությամբ իրականացրած գործընթացներից, որոնք պետք է տեղայնացվեին կամ կիրարկվեին մասնաճյուղում: Այս գործընթացը պլանավորված էր հենց 2025թ-ին իրականացնելու համար, որը չի իրականացվել, հետևաբար համապատասխան բաժիններն այն ներառել են 2026թ.-ի գործողությունների պլանի մեջ:

Մասնավոր ոլորտի գործընկերների համար կորպորատիվ փաթեթների մշակման և առևտրայնացման նպատակով (**գործողություն 4.4.1**) ԿԲՈԱ բաժնի կողմից մշակվել է մասնավոր հատվածի կարիքների ուսումնասիրության հարցման հարցաշար և տեղադրվել Google ձաչափում, հավաքագրվել է Տավուշի մարզի կազմակերպությունների և ԱՁ-երի էլեկտրոնային հասցեները և հարցաշարն ուղարկվել է համապատասխան էլ.հասցեներին՝ մասնավոր հատվածի կարիքների ուսումնասիրության հարցմանը մասնակցելու համար: Հարցմանը մասնակցած մասնավոր ոլորտի գործընկերների համար մշակվել են կորպորատիվ փաթեթներ: Բաժինը **պլանավորել է** 2026թ.հունիս–հուլիս ամիսներին **իրականացնել վերապատրաստման դասընթացներ**:

Տնտեսագիտության ֆակուլտետը 4.4.1 գործողության շրջանակներում գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ մշակել են կորպորատիվ փաթեթներ, մասնավորապես տուրիստական երթուղիներ, որոնք գործընկերները ներդրել են իրենց բիզնեսներում՝ առավելապես զբոսաշրջություն մասնագիտությամբ ուսանողների ավարտական աշխատանքների արդյունքում:

2025թ.-ից ուսանողների համար որպես լրացուցիչ կրթական ծրագիր իրականացվում են մանկավարժի որակավորման դասընթացները:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5: ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ:

Նպատակ 5-ը 2025թ.-ի համար ներառում է գործընթացներ բոլոր 4 խնդիրներից՝ 4 գործողություններով, որոնցից 1-ը՝ իրականացվել է (խնդիր 3), 1-ը՝ ընթացքի մեջ է (խնդիր 2), իսկ 2-ը չեն իրականացվել (խնդիրներ 1,4):

Ն Պ Ա Տ Ա Կ 5						
Խնդիր/գործ.	Խ1	Խ2	Խ3	Խ4	Ընդ.	%
2025 թ.	**1**	**1**	**1**	**1**	**4**	
Իրականացվել է			1		**1**	**25%**

Ընթացքի մեջ է		**1**			**1**	**25%**
Իրականացվել է մասնակի						
Չի իրականացվել	1			1	**2**	**50%**

Խնդիր 5.1 - Վարչական և կրթական անձնակազմի տեղակալման և վարձատրման արդյունավետ համակարգի մշակում և ներդրում:

Գործողություն	ՈՒՄՎ	ԱԿԻԱԲ, Իրավ/խ	ԵՊՀ ԻՄ
5.1.1 Վարչական և կրթական անձնակազմի տեղակալման, իրականացված գործառույթների, ծանրաբեռնվածության և վարձատրության համապարփակ վերլուծության իրականացում:	Չ/Պ	Չ/Պ	Չ/Ի

Այս խնդրից 2025թ.-ի իրականացման համար ներառված էր մեկ գործողություն, որը **չի իրականացվել**: Պետք էր իրականացնել վարչական և կրթական անձնակազմի տեղակալման, իրականացված գործառույթների, ծանրաբեռնվածության և վարձատրության համապարփակ վերլուծություն: Գործընթացը շարունակական է, սակայն ըստ պլանի պետք է ավարտվի 2026թ.-ին:

Խնդիր 5.2 - Տվյալների համակարգված, հասանելի և փոխկապակցված համակարգի ստեղծում:

Այս խնդրից ներառված էր միայն մեկ գործողություն, այն պետք է ամբողջությամբ իրականացվեր և ավարտվեր 2025թ.-ին: Պետք էր մշակել տվյալների հասանելիության, պահպանման և չտարածման անվտանգային ընթացակարգերի փաթեթ:

Գործողության իրականացնողը ՏՀՍԶ բաժինն է, որն իր մոնիթորինգի ֆայլում գործողության կատարումը նշել է **ընթացքի մեջ** և փաստել, որ ԵՊՀ-ի հետ համագործակցությամբ նախատեսված է մշակել ընթացակարգերի փաթեթ և ներդնել հաստատված ընթացակարգերը: Այս ուղղությամբ համենայն դեպս կոնկրետ արդյունքներ չեն գրանցվել:

Գործողություն	ՏՀՍԶԲ
5.2.1. Տվյալների հասանելիության, պահպանման և չտարածման անվտանգային ընթացակարգերի ներդրում:	Ը

Խնդիր 5.3 - ԵՊՀ ԻՄ տարեկան գործունեության համապարփակ պլանավորման, մշտադիտարկման և գնահատման արդյունավետ համակարգերի ներդրում, ֆինանսական ու բովանդակային հաշվետվողականության և թափանցիկության համակարգերի արդիականացում:

Գործողություն	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ԿԲՈԱԲ	ԳՔ	ԵՊՀ ԻՄ
5.3.3 Ֆինանսական գործունեության մշտադիտարկման և գնահատման գործիքակազմի լրամշակում, արդյունքների օգտագործման կանոնակարգում:	Չ/Պ	Չ/Պ	Ը	Չ/Ի	Կ	Մ	Կ

Այս խնդրից նույնպես 2025թ.-ի համար ներառված էր մեկ գործողություն (նախատեսված միայն 2025թ.-ի համար) և պետք էր մշակել և հաստատել ֆինանսական գործունեության մշտադիտարկման և գանահատման կարգ և կիրարկել այն, այինքն ունենալ ֆինանսական գործունեության իրականացված մոնիթորինգի արդյունքներ:

Նշենք, որ այս գործողության ուղղությամբ ֆակուլտետները ոչինչ չեն իրականացրել, քանի որ նրանք ֆինանսական ինքնուրույն գործունեություն և պատասխանատվություն չունեն:

Այս գործողության շրջանակներում ԿԲՈԱ բաժինը **մշակել է** «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ֆինանսական գործունեության մշտադիտարկման և գնահատման կարգը», որը հաստատվել է գիտական խորհրդի 27.12.2025թ. նիստում (այսինքն 2025թ.-ի դեկտեմբերին): Ակնհայտ է, որ կարգը կկիրարկվի 2026թ.-ից:

5.4.1 ԵՊՀ ԻՄ վարչական և կրթական ստորաբաժանումների վերակազմակերպման համար համապարփակ ուսումնասիրության իրականացում և կառուցվածքային վերափոխման ճանապարհային քարտեզի մշակում:

Այս գործողության իրականացման համար հավանաբար **պետք է ստեղծվեր աշխատանքային խումբ**, որն էլ 2025-26թթ-երի ընթացքում պետք է կատարեր ԵՊՀ ԻՄ կառուցվածքային վերափոխման կարիքների գնահատում և կազմեր նոր կառուցվածքի ու գործառույթների բաշխման նկարագրություն: Գործընթացը չի իրականացվել:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 6: ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԵՏ ԻՆՏԵԳՐՈՒՄ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՈՒՄ:

Նպատակ 6-ը 2025թ.-ի համար ներառում է գործընթացներ բոլոր 4 խնդիրներից՝ 9 գործողություններով, որոնցից 2-ը իրականացվել է (խնդիրներ 2,4), 6-ը՝ ընթացքի մեջ է (խնդիրներ 1,2,3,4), իսկ 1-ը իրականացվել է մասնակի (խնդիրներ 1):

Ն Պ Ա Տ Ա Կ 6						
Խնդիր/գործ.	Խ1	Խ2	Խ3	Խ4	Ընդ.	%
2025 թ.	**2**	**2**	**2**	**3**	**9**	
Իրականացվել է		1		1	**2**	**22.2%**
Ընթացքի մեջ է	**1**	**1**	**2**	**2**	**6**	**66.7%**
Իրականացվել է մասնակի	**1**				**1**	**11.1%**
Չի իրականացվել						

Ըստ 2025թ.-ի գործողությունների պլանի իրականացման համար ամենաշատ գործընթացներ նախատեսված էին այս նպատակի համար:

Խնդիր 6.1 - Համագործակցություն աշխատաշուկայի համապատասխան ոլորտների հետ կրթական արդյունքի և աշխատաշուկայի ակնկալիքների ներդաշնակեցման նպատակով:

Գործողություն	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ՈՒՄՎ	ԿԲՈԱԲ	ՏՀՍԶԲ	ԵՊՀ ԻՄ
6.1.1 Աշխատաշուկայի գործընկերների ցանցի ընդլայնում և համակարգում, բուհ-աշխատաշուկա կապի ամրապնդման նպատակով պարբերական միջոցառումների կազմակերպում:	Կ	Մ	Մ	Ը	Չ/Պ		Ը	Մ
6.1.2 Աշխատաշուկայի զարգացման միտումների և պահանջարկի պարբերական ուսումնասիրություն:	Կ	Ը	Ը	Ը	Չ/Պ	Կ		Ը

Այս խնդրի շրջանակներում.

– կազմակերպվել է համատեղ քննարկում բնական գիտությունների ֆակուլտետի և Տավուշի Մարզի ՏՏ ոլորտը ներկայացնող ընկերությունների միջև: Քննարկվել են կրթական գործընթացում աշխատաշուկայի առավել ակտիվ ներգրավմանը և շրջանավարտների աշխատատեղերի ձևավորման և իրականցման հարցեր: **Իրականացվել է** ԻԿՄ կրթական ծրագրի վերանայում արտաքին շահակիցների առաջարկների հիման վրա:
– Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները և դասախոսները հանդիպումներ են ունեցել մարզի արվեստի դպրոցներում: Կազմակերպվել է հանդիպումներ շրջանավարտների հետ, իրենց աշխատանքներով մասնակցել են ԵՊՀ-ում կայացած «ԲանՈՒԳործ. ԵՊՀ էքսպո-2025» միջոցառմանը և ցուցահանդեսին:
– Տնտեսագիտության ֆակուլտետը մասնակցել է Տավուշի մարզպետարանի կողմից կազմակերպած աշխատանքի տոնավաճառին, ինչպես նաև ԵՊՀ-ի ԲանՈՒԳործին:
– ԿԲՈԱ բաժինն իրականացրել է ՀՀ և Տավուշի մարզի աշխատաշուկայի զարգացման միտումների և պահանջարկի ուսումնասիրություն, կատարել վերլուծություն՝ նշելով ՀՀ ամենապահանջված մասնագիտությունները, մարզային աշխատաշուկայի պահանջարկը: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են ամփոփ զեկույցի տեսքով:

Այստեղ պետք է նշել, որ ֆակուլտետներն առանձնապես ակտիվ չեն աշխատաշուկայի գործընկերների ցանցի ընդլայնման և համակարգման, բուհ-աշխատաշուկա կապի ամրապնդման հետ միջոցառումների կազմակերպման գործում:

Խնդիր 6.2 - ԵՊՀ ԻՄ շրջանավարտների համայնքի համախմբում մասնաճյուղի շուրջ՝ համայնքում առկա մասնագիտական և ֆինանսական ռեսուրսների կոնսոլիդացման և մասնաճյուղը՝ որպես համագործակցության և հաղորդակցության կենտրոնական հանգույց դիրքավորելու նպատակով:

Գործողություն	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ԿԲՈԱԲ	ՏՀՍՋԲ	ԵՊՀ ԻՄ
6.2.1 Շրջանավարտների կոնտակտային տվյալների հավաքագրման գործընթացի բարելավում:					Կ	Ը	Կ
6.2.2 Շրջանավարտների համայնքի իրազեկման և ներգրավման ձևաչափերի և մեխանիզմների լրամշակում և գործարկում:	Մ	Չ/Պ	Ը	Չ/Պ	Կ	Ը	Ը

Այս խնդրի իրականացման շրջանակներում ԿԲՈԱ բաժինն իրականացրել է բավականին գործընթացներ: Առաջին գոծողության **(6.2.1)** իրականացման շրջանակներում.

– հավաքագրվել են ավարտական կուրսերի ուսանողների տվյալները,
– էլեկտրոնային բազայում թարմացվել են շրջանավարտների զբաղվածության տվյալները,
– տրվել են հայտարարություններ թափուր տեղերի վերաբերյալ,
– շրջանավարտներն ուղղորդվել են կոնկրետ աշխատանքների համար,
– շրջանավարտների համար բացվել է Տելեգրամյան ալիք:

Երկրորդ գործողության **(6.2.2)** իրականացման համար ԿԲՈԱ բաժինը **մշակել է** «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների իրազեկման և ներգրավման քաղաքականությունը», քննարկվել է մասնաճյուղի գիտական խորհրդին կից Որակի կառավարման մշտական հանձնաժողովում, ապա հաստատվել է ԳԽ 07.03.2026թ. նիստում:

Խնդիր 6.3 - Հանրային հաղորդակցության արդյունավետության բարձրացում թիրախային խմբերի հստակեցմամբ և Մասնաճյուղի բրենդի զարգացման և առաջխաղացման միջոցով

Այս խնդրի իրականացման արդյունքում ակնկալվում էին հետևյալ արդյունքները.

- Տարեկան առնվազն 1 նախագիծ, նվազագույնը 3 մեդիա արտադրանք,
- ԵՊՀ ԻՄ վիրտուալ տեսանելիության աճ:

Գործողություն	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ՈՒՄՎ	ԿԲՈԱԲ	ԱԿԻԱԲ	ՏՀՄԶԲ	ԵՊՀ ԻՄ
6.3.1 Գործընկեր լրատվամիջոցների հետ համագործակցությամբ տեղեկատվական նախագծերի իրականացում:	Ը	Չ/Պ	Մ	Ը	Չ/Պ	Կ	Չ/Պ	Ը	Ը
6.3.2 ԵՊՀ ԻՄ կայքի և սոցիալական հարթակներում պաշտոնական էջերի տեսանելիության ավելացում:	Կ	Չ/Պ	Կ	Չ/Պ	Չ/Պ	Ը		Ը	Ը

Այս խնդրի **6.3.1 գործողության** շրջանակներում ըստ ՏՀՄԶ բաժնի ներկայացրած տվյալների.

1) Հստակեցվել է գործընկեր լրատվամիջոցների շրջանակը («Տավուշ» հեռուստաընկերություն, «Առավոտ լուսո» հաղորդաշարի թիմ):
2) «Առավոտ լուսո» հաղորդաշարի թիմի հետ իրականացվել է նախագիծ 2025 թ. համար (պատրաստվել և հեռարձակվել են 2 շրջանավարտի վերաբերյալ հաղորդումներ):
3) Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Տավուշ» հեռուստաընկերության հետ՝ «Տավուշյան հորիզոններ» նախագծի իրականացման համար, հստակեցվել է նախագծի մասնակիցների ցանկը, ապա մեկնարկել է «Տավուշյան հորիզոններ» հաղորդաշարը և հաշվետու ժամանակահատվածում պատրաստվել և հեռարձակվել է 5 հաղորդում՝ ֆակուլտետների դասախոսների մասնակցությամբ:
4) Նախատեսվում է կնքել հուշագիր/պայմանագիր գործընկեր լրատվամիջոցների հետ:

Ըստ ֆակուլտետների ներկայացրած տվյալների ընդլայնվել է համագործակցությունը ՀՀ առաջին ալիքի հետ՝ «Առավոտ լուսո» հաղորդաշարի շրջանակներում, մասնավորապես հաղորդաշարը.

1) «Հայկական խեցեգործության ավանդները՝ նոր սերնդին» թեմայի շրջանակներում անդրադարձել է կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոս Աղասի Ղազարյանի ստեղծագործություններին,
2) «5 րոպե Արվեստ» ծագրի շրջանակներում անդրադարձել է կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոս Վահրամ Գալստյանի ստեղծագործություններին,
3) պատրաստել է հաղորդումներ կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսներ Անուշ և Դոնարա Չիբուխչյանների ստեղծագործության և գործունեության վերաբերյալ,
4) պատրաստել է հաղորդումներ կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողներ Վանուհի Գևորգյանի և Էրիկ Ամյանի վերաբերյալ (ԿԲՈԱ բաժնի նախաձեռնությամբ):

Միջազգային լրատվամիջոցը հաղորդում է պատրաստել մեր ֆակուլտետի խեցեգործության դասախոս Աղասի Ղազարյանի և հայկական խեցեգործության մասին:

Նշենք, որ առկա են գործընկեր լրատվամիջոցների հետ համագործակցության արդյունքում ստացված մեդիանյութերի հղումները:

(Այստեղ պետք է պարզել, թե ՀՀ առաջին ալիքի տվյալ հաղորդումների կազմակերպման կամ նախաձեռնման մեջ որքանով են մասնաճյուղը կամ ֆակուլտետները մասնակցություն ունեցել):

ԿԲՈԱ բաժնի կողմից **<u>մշակվել է</u>** տեղեկատվության հրապարակման և հանրությանը իրազեկման ընթացակարգը և **<u>վերանայվել է</u>** «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում: Փաստաթղթերը քննարկվել են նաև ՏՀՍԶ բաժնի հետ, այժմ *վերջնական խմբագրման փուլում են,* որից հետո կուղարկվեն ԳԽ հաստատման:

Այս խնդրի **6.3.2 գործողության** շրջանակներում ըստ ՏՀՍԶ բաժնի տվյալների.

1) Ստեղծվել է ԵՊՀ ԻՄ տելեգրամյան ալիք,
2) Ընդլայնվել է Facebook սոցիալական ցանցի հնարավորությունների կիրառումը,
3) Գործարկվել է ԵՊՀ ԻՄ ինստագրամյան էջը:

Այս սոցիալական հարթակներում պարբերաբար տեղադրվում են նյութեր ԵՊՀ ԻՄ գործունեության վերաբերյալ:

ԿԲՈԱ բաժնի կողմից.

1) հավաքագրվել և ամփոփվել են ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքէջում և սոցիալական հարթակներում մասնաճյուղի գործունեության վերաբերյալ տեղադրվող տեղեկատվության հասանելիության և արդիականության վերաբերյալ ուսանողների, շրջանավարտների և աշխատակազմի կարծիք-գնահատականները:
2) վերլուծվել են մասնաճյուղի ֆեյսբուքյան էջի, ինստագրամյան հարթակի և տելեգրամյան ալիքի տեսանելիության վիճակագրական տվյալները 2025թ.-ի նոյեմբեր ամսվա դրությամբ: Վերլուծության մեջ կատարվել են դրանց բովանդակության բարելավման, հղումների արդյունավետության բարձրացման և ռազմավարական մոտեցման համար առաջարկներ: Վերլուծությունն ուղարկվել է մասնաճյուղի Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին՝ առաջարկությունների հնարավոր կիրարկման համար: Բաժինը նշել է, որ նմանատիպ վերլուծություն կիրականացվի պարբերաբար, յուրաքանչյուր եռամսյակի ավարտին:
3) մշակվել է ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում տեղադրվող տեղեկատվության հասանելիությունից և արդիականությունից հասարակության բավարարվածության հարցման հարցաշար, որը քննարկվել է նաև ՏՀՍԶ բաժնի հետ: **<u>Հարցումն առայժմ չի իրականացվել</u>**:

Խնդիր 6.4 - Թիրախային ծրագրերի միջոցով Մասնաճյուղի սոցիալական պատասխանատվության իրացում:

Խնդրի իրականացման շրջանակներում ակնկալվում էին հետևյալ արդյունքները.

– Տարեկան նվազագույնը 1 ծրագիր Արցախից բռնի տեղահանվածների համար՝ առնվազն 7 մասնակցի ներգրավմամբ,

– Տարեկան նվազագույնը 1 ծրագիր սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների համար՝ նվազագույնը 10 մասնակցի ներգրավմամբ,
– Վերանայված և լրամշակված աշխատակիցների և ուսանողների գերազանցության մրցանակների կարգեր և ըստ կարգերի համապատասխան մրցանակների տրամադրում:

	ՀԳՖ	ԲԳՖ	ՏԳՖ	ԿԱՖ	ՈՒՄՎ	ԿԲՈԱԲ	ԱԿԻԱԲ	ՏՀՍԶԲ	ԳՔ	ԵՊՀԻՄ
6.4.1 Թիրախային ծրագրեր՝ Արցախից բռնի տեղահանվածների համար:	Կ	Չ/Պ	Մ	Չ	Չ/Պ	Ը		Ը		Կ
6.4.2 Թիրախային ծրագրեր՝ սոցիալապես խոցելի խմբերի ներկայացուցիչների համար:	Կ	Չ/Պ	Մ	Չ	Չ/Պ	Ը		Ը		Ը
6.4.3 ԵՊՀ ԻՄ համայնքի համար ներքին սոցիալականացման, ժամանցի և ինքնազարգացման հնարավորությունների ընդլայնում	Չ	Չ/Պ	Մ	Ը		Չ/Պ	Չ/Պ	Ը	Կ	Ը

Այս խնդրի 2025թ.-ի կատարման համար ներառված 3 գործողությունների իրականացնողները ֆակուլտետներն են, ՈՒՄՎ-ն և ԿԲՈԱ, ԱԿԻԱ և ՏՀՍԶ բաժինները:

1. Այս խնդրի առաջին գործողության (6.4.1) շրջանակներում.

1) **կազմակերպվել է** Արցախից բռնի տեղահանված ուսանողների պետության կամ մասնաճյուղի կողմից վարձավճարների լրիվ կամ մասնակի փոխհատուցման գործընթացը:
2) ԿԲՈԱ բաժինը ուսումնամեթոդական վարչության աշխատակիցների հետ համագործակցությամբ հարցման միջոցով **իրականացրել է** Արցախից բռնի տեղահանված ուսանողների և շրջանավարտների կարիքի գնահատում և վերլուծություն:

2. Խնդրի երկրորդ գործողության (6.4.2) շրջանակներում.

1) ՏՀՍԶ բաժինը **ապահովել է** սոցիալապես խոցելի խմբերի իրազեկվածությունը տարբեր սոցիալակ ծրագրերի վերաբերյալ, ցուցաբերել է տեխնիկական աջակցություն ծրագրերի իրականացման ընթացքում, ԵՊՀ ԻՄ պաշտոնական կայքով լուսաբանել է ծրագրերի իրականացումը:
2) ԿԲՈԱ բաժինը **մշակել է** ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի սոցիալապես խոցելի խմբերի կրթական և մասնագիտական աջակցության ծրագրի նախնական տարբերակը, որի մեջ ներառված են նաև մասնաճյուղում սովորող Արցախից բռնի տեղահանված ուսանողները: Այժմ գտնվում է քննարկման փուլում:
3) ԿԲՈԱ բաժինը Արցախից բռնի տեղահանված ուսանողների և շրջանավարտների կարիքի գնահատման արդյունքում 8 արցախցի ուսանող ուղղորդել է և նրանք օգտվել են տարբեր սոցիալական ծրագրերի, «UOU-Մանկական գյուղեր» ՀԿ-ի հետ համագործակցությամբ 7 ուսանողի ուղղորդել է «Երիտասարդների հզորացում» ծրագրին՝ ապահովելով աջակցության գործընթաց, 2 ուսանողի՝ «Հանուն իրավահավասարության» իրավապաշտպան ՀԿ-ի և «Տահույս» սոցիալ-կրթական ՀԿ-ի ծրագրերին՝ ստանալով տնտեսական հզորացման աջակցություն, մեկ ուսանողի ընտանիքի, որն ունի բազմակողմանի աջակցության կարիք

(հոգեբանական, սոցիալական, կրթական և տնտեսական), նույնպես ուղղորդել է համապատասխան ծրագրերի։

4) Ֆակուլտետներում կատարվել է ուսանողների զեղչային համակարգի բարելավում՝ ի նպաստ սովորողների։

Խնդրի 3-րդ գործողության (6.4.3) շրջանակներում.

1) Կիրառական արվեստի ֆակուլտետը **ներկայացրել է** ֆակուլտետի ուսանողների կողմից ԵՊՀ ԻՄ համայնքի համար իրականացրած ներքին սոցիալականացման հետևյալ գործընթացների մասին.
   - Դիզայն կրթական ծրագրի ուսանող Շ. Խաչատրյանի կողմից մշակվել և հաստատվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կենտրոնական մասնաշենքի բակի բարեկարգման նախագիծը, որը տնօրենության ջանքերով 2025թ.-ին սկսել է իրականացվել։
   - Դիզայն 4-րդ կուրսի ուսանողները ինքնուրույն աշխատանքների շրջանակում իրականացվել է Բնական գիտությունների և Կիրառական արվեստի ֆակուլտետների ինտերիերի ձևավորում,
   - Դիզայն 4-րդ կուրսի երկու ուսանողների ավարտական աշխատանքները նվիրված էին ԵՊՀ ԻՄ մարզասրահի և դասախոսների հյուրատան նախագծման և դիզայնի աշխատանքներին։
2) ԿԲՈԱ բաժինը **մշակել է** աշխատակազմի կարիքների ուսումնասիրության հարցման հարցաշար և 2025թ.-ի դեկտեմբերին իրականացրել է հարցում։ Հավաքագրված տվյալները վերլուծվել և ներկայացվել են 2026թ. փետրվարին։ *Նախատեսվում է* **արդյունքները քննարկել մասնաճյուղի տնօրենության** նիստերից մեկում։
3) ԿԲՈԱ բաժնի կողմից **մշակվել է** ԵՊՀ ԻՄ աշխատակազմի ինքնաիրացման և ժամանցի հնարավորությունների փաթեթը, որի նպատակն է աշխատակազմի մասնագիտական աճի, անձնական զարգացմանը միտված գործունեության և առողջ աշխատանքային միջավայրի ապահովումը։

6.4. խնդրի իրականացման շրջանակներում պետք է առկա լինեն նաև իրականացված ծրագրերի նկարագրությունները, օրակարգերը, մասնակիցների ցանկերը (ես տեղեկացված չեմ)։

Ամփոփում։

Նշենք, որ գործընթացների հիմնական մասը շարունակական են և ներառված են ստորաբաժանումների 2026թ.-ի գոծողությունների պլաններում։

Ըստ հաստատված ժամանակացույցի 2026թ.-ին նույնպես 2 անգամ կիրականացվի ռազմավարական գործունեության մոնիթորինգ՝ մասնաճյուղի հերթական տարվա գործունեությունը դիտարկելու և խնդիրները բացահայտելու համար։